

Մարգալետի տեղակալ Մելս Հարությունյանը մասնակցել է Հովհաննես Շիրազի 100-ամյակին նվիրված գրական-երաժշտական ցերեկույթին

28.11.2014



2014 թվականի նոյեմբերի 27-ին Վայքի հիմնական դպրոցում տեղի ունեցավ գրական-երաժշտական ցերեկույթ՝ նվիրված Հ. Շիրազի 100-ամյակին: Ցերեկույթին ներկա էին ՀՀ Վայոց ձորի մարգալետի տեղակալ Մելս Հարությունյանը, մարգալետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ Արփիար Ղազարյանը, Վայքի քաղաքապետի պաշտոնակատար Վասիլ Ասլանյանը: Ցերեկույթը կրում էր «Որ գարունները գան ու չգնան» խորագիրը: Սցենարն ընդգրկում էր մանուկ Հովհաննեսի դառը մանկության էջերը, հոր և մոր նվիրական կերպարները, գարնան, վարդերի և աշխարհի գեղեցկության գովերգմանը նվիրված ստեղծագործությունները, բեմականացված հայրենասիրական բալլադն ու «Սիամանթո և Խջեզարե» հայ-քրդական սիրավեպից մի դրվագ՝ ընդմիջված Շիրազի տեքստերով գրված երգերով: Միջոցառման մասնակիցներին գեղեցիկ ներկայացման համար շնորհավորեցին մարգալետի տեղակալ Մելս Հարությունյանը և դպրոցի տնօրեն Հովիկ Մնացականյանը: Նշենք, որ հուզառատ, կորուսյալ հայրենիքի կսկիծով և լավատեսական ոգով տոգորված ցերեկույթի սցենարը հեղինակել էր դպրոցի տնօրենի ՄԿԱ գծով տեղակալ Ա.Սիմոնյանը: